

Տարեկան գինը 10 լուրջի, կէս տարվան 6 լուր. Առանձին համարները 5 խօսենու.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Տիֆլիս, Ռեդակցիա „Մշակ“.  
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.

S E I S H O U N N ° 253.

# УСЛУГИ

ՀԵՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾԲՈՒՆԻ

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՆԵՐԿԱՅ 1898 թիւ

# ՄԱԿԱՐ

# ԴՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂ ԱՔԱԿՈՒ Ո ԾՎԵՐ

«Մ շակի» տարեկան գինը թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում 10 լրութի է, տասն  
և մէկ և տասն ամսվանը՝ 9 ր., ինն և ութ ամսվանը՝ 8 ր., եօթ ամսվանը՝ 7 ր., վեց ամսվանը  
6 ր., չինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր., մի  
ամսվանը՝ 1 լրութի:

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը (Բաղադրյայ և Բարօնսկայա փողոցն. անկիւն):  
Ուրիշ քաղաքներից պէտք է զիմել այս հասցեով. **ТИФЛИСъ**, թուրքականից՝ **TIFLIS**. Rédaçion du journal arménien «Մաշակ».

Յայտարարութիւններ ընդունվում են թէ հայերէն, թէ ռուսերէն և թէ օսման լեզուներուն:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Անսահման ագահոթիւն.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՂ-  
ԹԻՒՆ. Նամակ Երեանից. Նամակ Շուշուց. Նա-  
մակ Նոր-Նախիջևանից. Նամակ Խմբաղրո-  
թեան. Ներքին լուրեր. — Ա.Ք.ՏԻՆ ՑԱՊՈՒԹԻՒՆ.  
Նոր յամառութիւն. Իօլամ և պատերազմ. Պա-  
տերազմ. Զօլայի բացատրովթիւնը. Պատմագիր  
Միշլէ. Նամակ Թիւրքիայից. Նամակ Պարսկաս-  
տանից. Արտաքին լուրեր. — ԽԱՌՆ ՀՈՒՐՑԻ. —  
ՀԵՌՆԱԳԻՎՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակ Ֆը-  
րանսիայից:

## ԱՆՍԱՀՄԱՆ ԱԳԱՀՈՒԹԻՒՆ

Մեկը առիթ ունեցանք մի առանձին  
յօդուածով խօսելու այն չափագանց  
պահանջների մասին, որ արեցին գոր-  
ծարանական արդիւնագործութեամբ պա-  
րապող անձինք, դիմելով կառավարութեան  
և խնդրելով, որ արտասահմանից ներմուծ-  
վող մի քանի նիւթերի մաքսերը մե-  
ծացվեն ամենաբարձր չափով: Գործա-  
րանատէրերը իրանց լալկան դիմումնե-  
րով յայտնի տպաւորութիւն գործեցին:  
Մինիսարութիւնը վճռեց օգնել նրանց և  
մաքսերը մեծ չափով բարձրացնել, որպէս  
զի գործարանատէրերը չը վնասվեն և այդ-  
պիսով չը վնասվի գործարանական արդիւ-  
նագործութեան զարգացումը Ռուսաստա-  
նում: Մաքսերը բարձրացվեցին, ապրանք-  
ները թանգացան, սպառովները դժուար  
կացութեան մէջ դրվեցին: Միակ մսիթա-  
ռութիւնը այն էր, որ գործարանատէրերը

այլ ևս չեն վասավի, ծախքերը կը հանեն  
և ուրեմն արգիւնագործութիւնը կը զար-  
գանայ: Միամիտ ցանկութիւն...  
Սակայն ի՞նչ է ցոյց տալիս մեզ իրա-  
կանութիւնը: „Торговопромышленная я-  
Газета“ լրագիրը, որ իր տեղեկութիւն-  
ները քաղում է միանգամայն վստահելի  
աշբեւրներից, առաջ է բերում մի աղիւ-  
սակ, որից երեսում է, որ գործարանատէ-  
րերը երբէք այնպիսի ծանր դրութեան  
մէջ չեն եղել, ինչպէս ձեւայնում էին և  
որ նրանց ագահութիւնը հասնում է ծայ-

բայց եղութեան: Ֆիշդ թւերը ցոյց են  
տալիս, որ 1897 թւին, օրինակ, «Նօվօ-  
րոսիչակի քարածխային և երկաթի ընկե-  
րութիւնը» ստացել է զուտ օգուտ 410/,  
Միլեվլիցին մեքենայագործարանը 340/,  
Լիւբիմօվի սօդայի գործարանը 290/,  
Նարվի քաթանի գործարանը 251/2/,  
Դեպրէի գինեվաճառանոյը Մօսկվայում  
250/, Բագենի անիլինեան ներկերի ոռու-  
սաց բաժինը 240/, Սամարայի գարեջ-  
րագործարանը 230/, Կոլոմայի մեքենա-  
յագործարանը 170/ (և տուել է պարզե-  
ցիրեկտօրին 55, 295 բուլլի), Կինդլերի կի-  
սաբրդային գործարանը 160/ և այլն:  
Հարցնում ենք, արգե՞օք կարող է սպա-  
ռովը հաշտվել այնպիսի ծանր զոհաբե-  
րութիւնների հետ, որոնք մի կողմից նրան  
ճնշելով, միւս կողմից պէտք է գործարա-  
նատէրերին տան 40, 30 և 200/ զուտ  
օգուտ: Խնչո՞ւ պէտք է միլիօնաւոր ազ-

գաբնակութիւնը ստիպված լինի թանգ  
գնով ապրանք գնել, երբ այդ թանգու-  
թիւնը ամենեին անհրաժեշտ չէ երկրի  
արդիւնագործութեան զարգացման հա-  
մար: Երբ գործարանատէրը ունի 7—10—  
15% օգուտ, կը նշանակի նա գոհացու-  
ցիչ վիճակի մէջ է, որովհետեւ բանկերը  
երբեք այդ տոկոսը չեն տալիս ունեցած  
կապիտալին և այդպիսի խոշոր տոկոսներ  
ստանալը արդէն արտօնութիւն է: Հաս-  
կանալի է, որ հասարակական կարծիքը  
պէտք է բողոքի այդ չափազանց ագահու-

Վերջին համառուսական գիւղատնտեսական ժողովում Ռուսաստանի կենտրօնական նախանդներից ժողոված կալուածատէրերը և գիւղատնտեսները մատնանիշ արեցին գործարանական արգիւնագործութեան բռնած բացառիկ գերի վրա, և ցանկութիւն յայտնեցին, որ կառավարութիւնը արգիւնագործական քաղաքականութեան ասպարէզում նոր ուղղութեան հետեի: Եւ ժամանակին է:

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Սիքամի օր առաջ մեր հին դուռմայի վերջին նիստ-  
արն էր: Խեղճ երևանցիները վերջապէս ազատվե-  
ցին մեղամնից, հին ձայնաւորներից: Է՛ն, անցածը  
անցաւ: մենք արեցինք, ինչ որ կարողացանք,  
իսկագիտուչինչ, եթէ չը հաշենք այն, որ բաց  
արեցինք երևանցիների աչքերը ընտրողական  
գործի վրա և նրանք, տեսնելով խանոթական  
աղաների անընդունակութիւնը քաղաքային գոր-  
ծերի կառավարութեան մէջ, նրանց հրաժարա-  
կանը տալու ժամանակ, երեխ, ասում էին, մեծ  
առակախոս Կրիլօփի խօսքերով, թէ կան հա-  
րուսաներ, կаторիք սմerte ոճա եւ չեմ հիբուժ  
գոճա: Մեր անգործունէութիւնը և անպէտու-  
թիւնը քաղաքը կառավարելու գործում եղաւ  
պատճառ, որ երևանցիները գոնէ այժմ, ըստ ե-  
րենոյթին, աշողակ ընտրութիւն կատարեցին նոր  
գումայի համար, որին և ցանկանում ենք աշո-  
ղութիւն: Թէև հին ձայնաւորներից մի քանիսը,  
ընտրողների սխալանքից թէ նրանց նախապա-  
շարմունքից՝ սպրդվեցին նոր ձայնաւորների

շարքը, բայց միամիտ կացէք, նրանց թւի սակաւոթիւնը և լեզուի տկարամթիւնը անհնան և անվնաս է մեծամասնութեան առջև։ Մեր քաղաքի նար «Այրերին» շատ և շատ խառնիձաղանձ գործեր ենք թողել, որոնց միայն մաքրելը կը պահանջէ աւելի ժամանակ և աշխատանք, քան Աւգեան գոմերը մաքրելը։ Քաղաքային գործերի գեկավարութիւնը վերջին 5 տարվաց մէջ հինգ մարդու ձեռք անցաւ, որոնց ստէպ փոփոխութիւնը մի կողմից, ուպրավայի կազմակերպութեան անաջնորդիւնը և անընդունակութիւնը, ինչպէս և գումայի մեծամասնութեան անաջնորդութիւնը միւս կողմից՝ գոյացրին մի փունջ, որից բուրում էր... Այս

շրմգ տարբայ ընթացքում մենք մի նշանաւոր կամ արդիւնաւոր գործ չը կարողացանք կատարել, չնորհիւ այն հանգամանքին, որ երբ պատահում էր մի առաջարկութիւն կամ նախադիմ, որ պահանջում էր ուզեղի փոքրի ինչ շարժումն խորհելու կամ դատելու համար, յետաձում էինք գործը, թէև լուս, բայց պարզ յայնին թէ «սա մեր ինելքի բանը չէ»: Այսօր նոր զումայի առաջ զրված են տնային գործածութեան համար մաքուր և առողջարար ջուր մատակարարելու, քաղաքից լսած հողերի, ձիաքաշ երկաթուղու, վարելանողերի արդիւնքից ընկնելու, սպանդանոցի, քաղաքային տաճ շինութեան, քաղաքի արևելեան կողմի լերան անոտառապատելու, ուսումնարանի և այլ հարցեր, որոնցից զիմաւրապէս կախումն ունի մեր քաղաքի բարօրութիւնը:

Զենք կարող չը յշել մեր վերջին նիստից մի փաստ, որ եղաւ մեր հին կառավարիչների խե-  
լօք դատողաւթիւնների «վերջին վարդը»։ Ուպ-  
րավան, առանց զումայի գիտութեան, թոյլ է  
տուել Զաքար Գէորգեանին՝ տանել զինաւոր  
փողոցներով, իր տանից մինչև հասարակաց ա-  
ռուն, որի մէջ միանում են բաղանիքների ոտ-  
քը, անմաքրութեան կոյուզն. այդ կոյուզն  
շինվեց մեծ ծախսով, և ձայնաւորները շահ-  
տեսնելով այդ գործի մէջ քաղաքի համար, ուշք  
չը դարձրին ուպրավայի իրաւագանցութեան  
վրա։ Երբ այդ վերջնը նոր զեկուցումն է ա-  
ռում դումային և խնդրում է թոյլտութիւն օ-  
րիորդական գիմնազիայից նոյնակէս կոյուզի տա-  
նել մինչև Գէորգեան առուն, որի համար (ինչ-  
պէս ասլած է զեկուցման մէջ) գիմնազիան ար-  
դէն իրաւոնք է ստացել պ. Գէորգեանից, ձայ-  
նաւորներից մէկն առաջարկում է յետաձել  
այդ հարցը և ասէանմէն առաջարկում է յետաձել

համար, —անցած, արդէն դատված, վերջացած մի գործի համար. Պիկար հրատարակել էր Պրեյ-ֆուսի գործին վերաբերեալ մի քանի նամակ-ներ. վեց ամիս առաջ զինուրական դատարանը ընճել էր այդ գործը և անհրդարաբար Պիկա-րին պաշտօնից զրկել. Այժմ այդ նոյն գործը անկարծ նորից յարութիւն է առնուամ և Պի-կար բանտարկվում է: «Սա ինձ խանդարում է, ասում է մինհստրութիւնը, ողոգենք սրա ռեռա-

Այս, ինչ որ չէր համարձակվել անել օպօր-  
ոփւնիստ Մէլին, նա տեղի է ունենում արմա-  
ռական մինիստրութեան օրով, Բրիստոնի ձեռ-  
ով, այն Բրիստոնի, որ իր կեանքը մաշել, իր  
ազգերը ճերմակացրել է հանրապետական սկզբ-  
առնդների պաշտպանութեան գործում, Բրիս-  
տոն, որի խստապահանջ ավնութեան, կուսական  
անրապետականութեան առջև խոնարհվում էին  
միստիք բոլորը, նոյն իսկ իր հակառակորդները:

Ի՞նչ անկում և ինչ մահացու հարուած էր, որ  
ասցրեց Բրիստոն թէ իր և թէ ամբողջ արմա-

Իրերի այս նոր, սուր ճգնաժամին ահա կրկն  
սովորէզ է զալիս Եմիլ Զօլա, «Augore» լրա-  
րի յուղիսի 16-ի համարում մի նոր բացնա-  
ակ ուղղելով այս անփամ ոչ հանրապետութեան  
ախագահին, այլ մինիստրնախագահ Բրիսո-  
բն: Առաջ ենք բերում այսոեղ մի քանի կտոր  
ցդ պերծախօս զրուածքից:

«Պարսն Բրիսսօն,

«Դրա մասնաւուն է առ Հայութիւն և Տէ՛ս առ Հայութիւն և Տէ՛ս



Նամակ չէ գրում իր կնոջը։ Այդ պատճառով  
կինը թոյլաւութիւն է ստանում Եղմիածնից և  
ամուսնանում է մի ծեր մարդու հետ։ Հիմա  
կարնեցի հայը եկել է և տեսներով, որ կինը ար-  
դէն ամուսնացել է, մի քանի օր իր աղջկայ մօտ  
մնալուց յետոյ, որ նոյնպէս պսակվել է իր բա-  
ցակայութեան ժամանակ, զնաց Եղմիածնին՝ իր  
իրաւունքները պաշտպանելու։»

ԵՐԵՒԱՆԻ գաւառի Ղամարու զիւղից հաղորդում են հետեւալը. «Այս տարի եղանակը անձրևային է, ուստի երկիւղ կայ, որ խաղողի «օւծված» չիւանգութիւնը աւելի ևս զարգանայ: Եղանակի հովութեան պատճառով հունձը այս տարի ուշացաւ: Ցորենը, որ ծախփում էր 35

ԲԱԳԻՈՒՄ, ինչպէս ճաղութիւրը, անսավոր չոք է ու լիսի 13-ին, փողոցում, արմի օրիորդ, Տեղեգօննայապարոն—Պարապետում:

ՃՈՒՇՈՒՑ մեկ գրում են. «Այստեղ շոքեր են լինում. տարբութեան աստիճանը ստուերում 18—20° է, իսկ արեգակի տակ 30—35° է հօմիւրի: Քաղաքի միակ զբոսատեղին, «չոր ու ցամաք» բուլվարն էլ, մի այնպիսի անհոգութեան է մատնված, որ մանգալն անհնարին է լինում: Լապտերներ չը կան, ճեմելիքներն էլ խորդ ու

անխոռսափելի է։ Միթէ այդ ամենը տում մեր քաղաքի ձայնաւորները։

ԳՐՈՒԽՅ մեղ գրում են. «Գօրու գաւառի  
Տղվիա. գիւղն ունի մօտ 150 տուն, որից 60  
տուն վլրախօս հայեր են: Հայերն ունեն մի  
խարիսուլ եկեղեցի, որի նորոգութեան համար  
հարկաւոր է մօտ 500 բուրլի. տեղացի հայերը,  
իրանց քաւորութեան պատճառով, չեն կարողա-  
նում նորոգել: Թիֆլիսի՝ լոկ անունով բարերար՝  
վաճառականներից մինը խոստացել է նորոգել,  
բայց մինչեւ այսօր էլ խոստամոնքը լոկ խոստ-  
մոնք է մնում, ուստի դարձնում ենք ուշազրու-  
թիւն այդ բանի վրա: Տեղացիները պարապվում  
են երկրագործութեամբ և այգեգործութեամբ,  
վերջին ծայր աղքատութեան մէջ են՝ չնորհիւ  
անցեալ և այս տարվայ բնութեան արհաւիրքնե-  
րի: Հերու կարկուտը փչացրեց բոլոր այդիները  
և ցանքսերը, իսկ այս տարի իսխոտ ձմեռով չո-  
րացրեց որթերը: Հայի բերքն էլ անբաւարար  
է, այնպէս որ խեղճ գիւղացիները նոյն իսկ  
ձաթ էլ չունեն ուտելու»:

ԱԽՍԼՀՔԱԼԱՔԻՑ մեղ զրում են. «Մեր եկեղեցում հոգեհամովնու կատարվեց Գլադստոնի յիշտառակին: Մի ճառ էր պատրաստված, որը, սակայն, չը կարդացվեց, բայց Քաջազնունիքահանան ներկայ եղաղներին մի երկու խօսքով ժանոթացրեց հանգուցեալ մեծ մարդասէրի անձնաւորութեան հետ»:

# ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

## ՆՈՐ ՅԱՄՍՈՒՌԻԹԻՒՆ

Պարիզից հեռավրում են յուլիսի 10-ից. Թիւրքիայի մերժումը՝ վարձապրոթիւն տալ Կ. Պօլսի 1896 թվի կոտորածի ղաներին, առիթ է ուսել կիսապաշտօնական «Tempt» լրագրում մի ողողուած տպել, որի մէջ սաստիկ պախարակում է օսմանեան կառավարութիւնը, որը թող է ուսել իրան՝ վէճի տակ ցցել բաւարարութիւն ուղարկուած սկզբունքը, մի սկզբունք, որ նա վաղաց սսուստացել է քաղաքակիրթ աշխարհին: Մինհստական օրդանը յայտնում է, թէ ինչ կերպ էլ այցելու լինենք Կ. Պօլսի կոտորածի վրա, անշարքիլ է որ և է սովորական կունենալով և նկառումներով պակասեցնել կամ բոլորովին վերացել օսմանեան կառավարութեան վրա ծանրացած պատասխանաւութիւնը, որը հէնց առաջին օրից հաստատվել է երօնական մեծ պետութիւնների ձեռքով: «Անկարելի է—շարաւակում է «Tempt» լրագիրը—ներքել, որ Կ. Պօլսի փողոցներում արդէն երկու տարուց ի եր կատարվում են արիւնահեղ զրամաներ, ունք շարունակվում են մի քանի օր և այն ևս առավարութեան աչքի առաջ, որը մասնակից այդ գրամաներին և զիշողաբար է վերաբերում մարդասպանների կազմակերպված խմբեններ: Կիսապաշտօնական լրագիրը յայտնում է ապա, որ այդպիսի պայմաններում ոչ Ֆրանշիան և ոչ էլ ուրիշ որ և է պետութիւն չեն լիստինէի սահմաններից դուրս հրէակսածողութիւն չը գտաւ: Եւ դա հասկա Հրէականութիւնը երբէք ձգաւում չէ տիրապետել աշխարհի վրա, տարածել դրսի երկիրներում: Ենովան բաւական մարտում, որ Խորայէլի փոքրիկ ազգը ընտրեալը: Այդ պատճառով նա ոչ մենայն խստութեամբ պատժում էր, ազգը այնքան յաճախ հեռանում էր այլ և երկնքի պատզամ էր զարձնուած կոտորածը, արիւնաչեղութիւնները: Բայց էջերը ծայրէ ծայր զարդարվում են արագմի ներբողներով:

նէր քրիստոնեաներին: Ղուրանի մէջ կան  
պարզ ցուցմանընթեր այդ մասին: Մարգա  
բուլով քարոզները այս էին ասում՝ «Ով ինձ  
չէ, նա ինձ դէմ է»: Եւ նրա մօտիկ օգնակ  
ները, նրա ընդունակ յաջորդները շատ լաւ  
հասկանում մարդարէի հիմնական մոգերը:  
լամի առաջին գործիչների ամենամեծ ծա-  
յութիւնն այն էր, որ նրանք լաւ հասկաց-  
որ եթէ նոր կրօնը մնայ Արարիայի սահման  
բում, շատ ջնջին աջողաւթիւն կը գտնէ:  
խարճակալութիւն—ահա այն գաղտնիքը,  
այնքան մեծ ծաւալ հաղորդեց նոր կրօն  
հրէականութիւնը քարացած մնայ իր ցեղի և  
իր երկրի նեղ սահմաններում: խլամը օգ-  
քաղեց այդ դասից և աւելի մեծ, լայն պա-  
րագմ ծրագրեց: Այդ գաղափարը հրաշակեր  
մի ահազին զինված մասսա, որին համախմբ  
ֆանատիկոսութիւնն էր, միացած հարուստ  
արի և երկնային դրախտի խոստման հետ:

Խլամը առանց պատերազմի համաշխարհա-  
նուածումներ չէր անի: Այդ են ցոյց տալիս Դ  
էութիւնը և դարերի փորձերը:

## Պ Ա Տ Ե Ր Ա Զ Մ

Գեներալ Շաֆտէր հեռագրեց իր կառարության մասին հաղորդական այժմ, ու այս պատճենը առաջանական է 22,780 հոգի։ Ենթադրում ուր բացի ցուցակի մէջ նշանակվածներից, մամրոցների պաշտպան զօրքերը, որոնք նոյն պիտի վիճաթափ դառնան, մօտ 2000 հոգի Բոլոր գերիներին, որոնց թիւը այդպիսով հանում է 25 հազարի, ամերիկացիները իրա հաշով պիտի տանեն Սպանիա։ Սահա-Եամբ 2 ամերիկացիների ձեռքն անցան 10 միլիոնական գույքու և 10 հարաբ հոգան։

փամփուշտ և 10 հազար հրացան:

Կորբացի ապօտամբների և ամերիկացիների յարաբերութիւնները լարվեցին: Անա ինչ է բուռ ՞էտէրի գործակալութեան թղթակի «Բանը հասել է այս տեղին», որ երկու քանոների հաղորդակայութիւնը իրապէս ընդհատվէ և նրանց փոխադարձ յարաբերութիւններէին յիշեցնում են թշնամիներին, քանի դժակիցներին: Հենց որ գեներալ Շաֆտէր հրաբարակեց իր վիրուր՝ թէ չը պիտի թոյլ ոկուրացիներին մանեւ: Ամստելապո, Գալակի

կուբացիներին մանել Սանտ-Եվգօ, Գարսիա  
բանակում բարձրացան բողոքի և անբաւակը  
նութեան ձայներ: Ակնյայտնի էր, որ ապր  
տամբները սաստիկ հրասթափված են. նրա  
մեծ յոյս ունէին թէ իրանց թոյլ կը տրվի ո  
զոպտել Սանտ-Եվգօն, ինչպէս կողոպտել են  
քանի ուրիշ տեղեր: Հիասթափումը այնքան մ  
էր, որ կուբացիների առաջնորդներից մէջ  
Կաստիլիո, եկաւ Շափտէրի բանակը, որ իման  
ամերիկայիների հրատարակած վճռի պատճա  
ները: «Ինչո՞ւ—հարցրեց նա—Սանտ-Եվգօն ս  
տի մնայ մեր թշնամիների ձեռքում»:—Սպ  
նիացիները մեր թշնամիները չեն, պատասխ  
նեց Շափտէր.—մենք կուիւ ենք մղում Սպ  
նիայի զինուորների դէմ և բոլորովին դիտա  
րաւթիւն չունենք կողոպտելու սպանիական ք  
ղաքացիներին: Ոչ մի կուբացու չի թոյլատր  
մանել քաղաք, ինչպէս և չէ թոյլատրվում  
մի ամերիկական զինուորին: Փաղաքի ապագ  
կառավարութեան ձեր մի հարց է, որ պիտ  
ինքը, ազգաբնակութիւնը, երբ սպանի  
կան գորըը կը հեռանայ: Ես ենթարկում ե  
որ քաղաքը այն ժամանակ կը յանձնիր ձեզ»:  
Սառնութիւնը երկու բարեկամ և դաշնակ  
բանակների մէջ այն աստիճանին է հասել,  
մի քանիսները ենթարկում են թէ շուտով ըն  
հարւեմներ տեղի կունենան նրանց մէջ: Լօնդ  
ոնից հեռագրում են, որ Գարսիա արդէն թոյլ  
է իր բանակը և քաշվել է լեռներու:

ԶՈԼԱՅԻ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆԸ

Էմիլ Զօլա Փրանսիայից հեռանալու օրը ողարկել է «Aurore» լրագրին մի նամակ, որմէջ մանրամասն կերպով բացատրում է թէ ի չու ինքը առժամանակ թողնում է Փրանսիա՝ նա ասում է, որ իր ցանկութիւնն է ժամանս վաստակել, մինչև որ վճռաջինջ ատեանը լայտնէ իր կարծիքը, թէ արդեօք կարելի է խսկել զատարանում Դրէյֆուս-Եստէրհազիի գործ մասին։ «Ես—ասում է Զօլա—պնդում էի թէ լրաւունք ունեմ իմ բոլոր առաջ բերած փաստը հաստատութեան համար վկայութիւններ ընդուլ։ Ինձ մերժեցին։ Ես խնդրեցի յետածդ գործի քննութիւնը, մինչև որ իմ այս պահանջ կը քննէ վճռաջինջ դատարանը, բայց ինձ նորի մերժեցին։ Ուզում էին ինձ հարկադրել, որ վերական ձեռով դատաստանական քննութեան ենթակա մարկվեմ այնպիսի պայմանների մեջ, որոնք մայլ չեն տալիս պարզել ճշմարտութիւնու։ Բա-

յի զբանից, Զօլա ուզում է սպասել մինչեւ որ  
կը վերջանայ Էստէրհավիի գործի քննութիւնը,  
որ սկսված է այժմ և այդ դէպքում Զօլա կա-  
րող կը լինի դատարանի մէջ առաջ Էստէրհավիի  
գործակիցների անունը։ «Այստեղ չէ կարող մի-  
նել խօսք այն մասին, թէ ես փախչում եմ բան-  
տարկութիւնից, որովհետեւ ամենքն յայտնի է,  
որ մեղադրվածի բացակայութեան ժամանակ  
տրված վճիռը վերջնական չէ։ Ես աշխատում  
եմ, որ գործածվեն այն բոլոր միջոցները, ո-  
րոնք օգտակար կը լինեն ծամարտութիւնը երևան  
հանելու համար։ Համաձայնին, որ ճիշտված և  
կտրաված մնայ գործը, չը գործադրելով այն  
ամենը, ինչ կախված է ինձանից հաստատ վը-  
կայութիւններ ներկայացնելու համար, կը նշա-  
նակէր զուր կորցնել այն բոլոր ջանքերը, որ  
ես արել եմ վերջին վեց ամիսների ընթացքում։  
Ես ուզում եմ գործը հասցնել վախճանին։ Իոչ  
որ էլ լինի, ես կը ներկայանամ իմ դատաւոր-  
ներին եկող հոկտեմբեր ամսին, արձակուրդնե-  
րից յետոյ։ Նորից ես կառաջարկեմ նրանց աշ-  
քի առնել իմ ձեռքում գտնվող վկայութիւննե-  
րը։ Ֆրանսիան նորից կը տեսնէ թէ ինչպէս  
վախում են լոյսից այն մարդիկ, որոնք այժմ  
Փանֆարօնի դեր են կատառում։»

ֆանֆարօնի զեր են կատարում:»  
Ֆրանսիայից հեռացել է և «Aurore» լրագրի պատասխանատու խմբագիր Պերրէ, որ դատի է ենթարկված իրքն Զօլայի յանցակից: Հեռանալու վճիռը կայացաւ Վէրսալի դատարանի շինութեան մէջ, այն ժամանակ, երբ դատաւորները հեռացել էին Լաբօրիի առարկութիւնները ըննելու համար: Զօլա սկզբում ընդդիմանում էր հեռանալու մտքին, բայց Լաբօրի, որ շատ բան է սպասում Էստէրհազիի գործից, համոզեց նրան անպատճառ հեռանալ առժամանակ: «ԽօօՍՏԻ» լրագրի Պարիզի թղթակիցը, խօսելով Զօլայի հեռանալու մասին, խիստ յարձակվում է նախկին բուլանի խսների զէմ, որոնք փափրուզմեան, փախուստի նշան են տեսնում հոչակաւոր վիպագրողի վարմունքի մէջ: Նա ասում է, որ Զօլա օգոստ է բաղում բոլոր իրանից կախված միջոցներից, որպէս զի թոյլ չը աայ, որ նորից կրկնվի դատաստանական կօմէդիան:

ՊԱՏՄԱԳԻՐ ՄԻՇԼԻ

Ֆրանսիայում այս քանի օրերը մեծ հանդէս-  
առվ տօնվեց պատմագիր Միշլէի ծննդեան հա-  
րիւրամեակը: Խսկապէս այդ տօնը պիտի կա-  
տարիէլ օգոստոսին, որովհետև Միշլէ ծնվել է  
այդ ամսին. բայց Փրանսիացիները կամեցան  
տօնել նրա յիշտառակը իրանց ազգային տօնի  
օրը, յուլիսի 2-ին: Եւ դա արդարացի է, որով-  
հետև Միշլէ բուն ազգային պատմագիր է:  
«Նրա Ֆրանսիայի պատմութիւնը», ասում է  
մի ռուս լրագիր, ներկայացնում է ջերմ կեր-  
պով սիրված հայրենիքի, Փրանսիականութեան  
ապօթէօլ: Նա ամբողջապէս լի է հրավառ ո-  
գեսրութեամբ: Մի որոնէք այդ պատմութեան  
մէջ վկայութիւններ տարեգրութիւններից կամ  
անյայտ զօկումենտներից: Լինելով աւելի բա-  
նաստեղծ, քան պատմագիր, Միշլէ սաւառնում  
է միւս պատմագիրների բանակի վրա, որոնք  
ըրբում են արխիվների փոշին և երբեմն տաս-  
նեակ տարիներ են անցկացնում մի որ և է ան-  
համն պատմական հարց ուսումնամարելու համար...  
Միշլէ երգում է և ոչ թէ պատմում: Նրա «Ֆրան-  
սիայի պատմութիւնը»—բալլագաների մի շարք  
է, խոր և խորհրդաւոր, ինչպէս իր, բանաստեղ-  
ծի, սիրաբ: Մինչև իսկ նրա լեզուն մի միապա-  
ղալ պօչզիա է, որը կարելի է երգել, չը նայած  
որ ոսանաւոր չէ»...

# ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

